



Հաստատում եմ՝

Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի
ղեկավարի պ/կ *Արզումանյան*

11 հոկտեմբերի, 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի
Արվեստի պատմության և տեսության ամբիոնի
2022 թ. հոկտեմբերի 11-ի նիստի արձանագրությունից

Նիստին մասնակցում էին. Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Օրդոյանը, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Նարինե Սարգսյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ս. Գալստյանը, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Անուշ Ասլիբեկյանը, ամբիոնի ավագ դասախոս Նարինե Ջրբաշյանը, Քրիստինե Ղուշյանը:

Լսեցին. Արվեստագիտության թեկնածուի աստիճանի հայցման համար, հրապարակային պաշտպանության ներկայացված, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հայցորդ Վերոնիկա Իգորի Ժուրավյովայի՝ «Աշխարհի պատկերի էական ասպեկտները Սերգեյ Փարաջանովի արվեստում» թեմայով ատենախոսության մասին կարծիք կազմելու հարցը:

Արտահայտվեցին. Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Օրդոյանը, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ս. Գալստյանը, ամբիոնի ավագ դասախոս Ն. Ջրբաշյանը և Ք. Ղուշյանը:

Որոշեցին. Վերոնիկա Իգորի Ժուրավյովայի «Աշխարհի պատկերի էական ասպեկտները Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության մեջ» (գիտ. ղեկ.՝ արվեստագիտության թեկնածու Գարեգին Զաքոյան) ատենախոսությունը նվիրված է համաշխարհային կինոյի ամենավառ և առասպելական կերպարներից մեկի՝

կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության ուսումնասիրությանը: Արդեն մի քանի տասնամյակ է, այս արվեստագետի յուրօրինակ արվեստը մեծ հետաքրքրություն է առաջացնում թե՛ արվեստասերների, թե՛ հետազոտողների շրջանակներում: Նրա անձի և ստեղծագործությունների վերաբերյալ մեծաթիվ գրքեր են հրատարակվել, կատարվել են ուսումնասիրություններ տարբեր հարթություններում, բազմաթիվ վավերագրական ֆիլմեր նկարահանվել: Սակայն իբրև հետազոտության նյութ նրա արվեստը չի սպառվել, այլ մշտապես հնարավորություն է տալիս դիտարկվել նոր տեսանկյունից, նոր համատեքստում: Փարաջանովը, բնույթով լինելով առասպելաստեղծ անձնավորություն, կյանքի ընթացքում անընդհատ ստեղծագործել է՝ ջնջելով իր կյանքի և ստեղծագործության միջև եղած սահմանները և նպաստելով իր անձի շուրջ առասպելական պսակի պարուրմանը: Այդ իսկ պատճառով նրա ստեղծագործություններն անբաժան են հեղինակի կենսագրությունից՝ իբրև համատեքստից, ուստի հաճախ են դիտարկվում իբրև մեկ ամբողջություն: Առատ հուշագրական գրականություն կա, որտեղ հեղինակների ներկայացրած պատմությունները, մի կողմից, ներկայացնում են Փարաջանովի էքսցենտրիկ, արտասովոր խառնվածքը՝ պատկերացում տալով այս արտառոց արվեստագետի ու նրա ստեղծագործության մասին, մյուս կողմից, նրա կերպարի սուբյեկտիվ պրոյեկցիաները երբեմն խճճում են իրենց հակասականությամբ՝ ինչ-որ տեղ հեռացնելով ճշմարիտ ընկալումից:

Հետազոտողի խնդիրն է՝ գտնել ու կազմավորել այն առանցքը, որի օգնությամբ վերջինս կկարողանա սահմանել և համակարգել դիտարկման իր առանձնահատուկ սկզբունքները և որոշակի տեսանկյունից ներկայացնել արվեստագետի ստեղծագործության պարադիգմը: Եթե խոսքը կինոյի մասին է, ապա յուրաքանչյուր հիրավի ականավոր ռեժիսոր էկրանին ստեղծում է աշխարհի սեփական պատկերը՝ իր առանձնահատուկ, ճանաչելի աշխարհը, որի կերպարները և տարրերը բնորոշ են միայն իրեն և որոնց միջև այնպիսի յուրօրինակ կապ է ստեղծվում, ինչի շնորհիվ առանձին գործերը միավորվում, հավաքվում են մեկ ամբողջության մեջ: Այս երևույթը հատուկ է և պոեզիային: Բանաստեղծներից յուրաքանչյուրն իր ճանաչելի աշխարհն է ստեղծում՝ օգտվելով բառերից և «ազատագրելով» բառերն իրենց առօրեական իմաստներից, ինչպես ժամանակին ասել է Դյուֆրենը: Այդպես Փարաջանովն իրերն

էր ազատագրում իրենց առօրեական, սովորական իմաստներից՝ դրանց պլաստիկ, պատկերային լեզվով հաղորդելով անսպասելի նշանակություն: Սա հատկապես է կազմում այս ռեժիսորի արվեստի *առասպելաբանաստեղծական հիմքը*, որը տվյալ աշխատանքում առանձին ուշադրության է արժանացել:

Ատենախոսության հեղինակը նպատակադրվել է առանձնացնել աշխարհի պատկերի էական ասպեկտները Փարաջանովի ստեղծագործության մեջ՝ ուսումնասիրելով նրա արվեստի հիմնական պարադիգմի բնույթը, իմաստաստեղծ հասկացությունները և կառուցվածքային առանձնահատկությունները: Աշխատանքն իրականացնելու համար ուսումնասիրվել է մեծածավալ տեսական գրականություն, քննության են առնվել Փարաջանովի ֆիլմերի սցենարները, վերջինիս նամականին, այդ թվում՝ բանտից ուղարկված նամակները, ինչպես նաև վավերագրական նյութերը, հարցազրույցները, որոնցում ռեժիսորը հաճախ ձևակերպել է նաև իր գեղարվեստական մոտեցումներն ու գաղափարները, ստեղծագործության դրույթները:

Վ. Ժուրավյովան մանրակրկիտ հետազոտել է Փարաջանովի կենսագրությունը, հետևել նրա անձնական և ստեղծագործական ճակատագրին՝ ներկայացնելով կենսագրական փաստերի և իրադարձությունների ազդեցությունը ռեժիսորի ստեղծագործական ոճի վրա նրա կրած փոփոխությունների և տրանսֆորմացիաների համապատկերում: Ռեժիսորի սեփական կենսափորձի վերաիմաստավորումը դիտարկվել է փոփոխվող արտաքին հանգամանքների լույսի ներքո՝ սեփական պատմության առասպելականացման պրիզմայով: Միթոսը՝ առասպելը, դիտարկվել է իբրև աշխարհի պատկերի միասնական հայեցակարգ Փարաջանովի ստեղծագործության մեջ: Աշխատանքում այն դիտարկվել է նաև ռեժիսորի կերպարվեստի և «պերֆորմատիվ գործունեության» համատեքստում:

Համակողմանի դիտարկման և վերլուծության են ենթարկվել Փարաջանովի կինոարարումը և կերպարվեստը, ֆիլմերը և կոլաժները: Աշխատանքի հեղինակը հանգամանալից ներկայացնում է Փարաջանովի կողմից նաև դասական և համընդհանուր սյուժետային կառուցվածքների վերաիմաստավորման օրինակները: Առանձին քննության և համակարգման են ենթարկվել Փարաջանովի բանտային շրջանի գործերը: Ռեժիսորի ստեղծագործությունները դիտարկվել են ըստ տարբեր

պարամետրերի, տարբեր տեսանկյուններից՝ կադրի կոմպոզիցիայի, գույնի, ձայնի գծանկարի և այլն: Նշելով և դիտարկելով Փարաջանովի վաղ շրջանի կինոժապավենները՝ իբրև հետազոտության անհրաժեշտ հիմք, աշխատանքի հեղինակն իրավացիորեն կարևորում է դրանք ռեժիսորի հետագա որոնումների համատեքստում, ինչը և հանգեցրել է վերջինիս իր հասուն կինոնկարների գեղագիտությանը:

Առանձնացնելով ռեժիսորի ստեղծագործության հասուն շրջանի ֆիլմերը (1965-1988 թթ.)՝ ատենախոսության հեղինակն իրականացրել է այդ կինոերկերի համակարգված վերլուծություն: Վերջինս կարևոր, առանցքային ֆիլմերի համակարգված կինովերլուծությունն իրականացրել է օգտվելով Հելմուտ Կորսեի մեթոդից և հիմնավորելով դա հետևյալ կերպ. «Համակարգված կինովերլուծությունը հետազոտողից պահանջում է ֆիլմի արձանագրություն, այսինքն՝ կինոերկի գործողությունների սցենարական հաջորդականությունը՝ սկրիպտը, որի երկու տեսակ են տարբերում՝ արձանագրում ըստ մոնտաժային պլաների և արձանագրում ըստ էպիզոդների» (Ատենախոսություն, էջ 64): Աշխատանքում օգտագործվել է երկրորդ տարբերակը: Ժուրավյովան այս մոտեցումը հիմնավորել է լակոնիկությամբ և նրանով, որ այս մեթոդը թույլ է տալիս կինոժապավենի համալիր դիտարկում: Այնուհետև հեղինակն անցում է կատարում Փարաջանովի կինոնկարների կինոգիտական վերլուծությանը:

Ինչ վերաբերում է սցենարների դիտարկմանը, ապա Ժուրավյովան իրավամբ հիմնավորում է, որ «սցենարական տեքստերի վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել և նկարագրել ռեժիսորի սցենարային նյութի կերպար-սխեմաները՝ իմաստային պատեռնները» (էջ 61): Ընդ որում, Փարաջանովի սցենարները նա դիտարկել է միայն վերլուծվող ֆիլմերի համատեքստում:

Այստեղ ատենախոսության հեղինակը Փարաջանովի սցենարները դիֆերենցել է ըստ բովանդակության հետևյալ կերպ.

«ա) արքետիպային պոմետային կառուցվածք՝ «Մոռացված նախնիների սովերները», «Դևը», «Հրաշք Օդենսում»; բ) ռեժիսորի կողմից սեփական կենսագրության վերաիմաստավորումը՝ «Կիևյան որմնանկարներ», «Խոստովանանք», «Այսօր», «Կարապի լիճ. Ջոնա»; գ) անդրադարձ ազգային միթոսին՝ «Սայաթ-Նովա»,

«Արա Գեղեցիկ», «Մասունցի Դավիթ», «Իկար», «Շուշանիկի չարչարանքները»; դ) ավելի վաղ ստեղծված այլ հեղինակի արվեստի ստեղծագործություն, որպես պատումի կենտրոնական կոմպոնենտ՝ «Ննջացող պալատ», «Ոսկե կերպար», «Հանդիսությունների պալատ», «Գանձեր Արարատ լեռան մոտ», “Intermezzo” (էջ 62): Այս համակարգման մեջ սակայն հեղինակը վրիպել է՝ հին հունական դիցաբանության կերպար Իկարին տեղավորելով հայ ազգային միթոսի սահմաններում: Թերևս ավելի ճիշտ կլիներ այս սցենարը տեղավորել առաջին խմբավորման՝ արքետիպային սյուժետային կառուցվածքի սահմաններում:

Հետազոտական աշխատանքը նվիրելով աշխարհի պատկերի էական ասպեկտների բացահայտմանը Սերգեյ Փարաջանովի ստեղծագործություններում, նրա յուրահատկության բազմակողմանի և բազմաշերտ դիտարկմանը, իբրև աշխարհի պատկերի էական ասպեկտ շեշտելով *առասպելաբանաստեղծական պարադիգմը*, իսկ *միասնական հայեցակարգի ձև՝ մյութոսը*, Ժուրավլյովան նաև անդրադարձել է քսաներորդ դարի արվեստում մեծ հետք թողած ռեժիսորի *աշխարհայացքային հիմքերին*:

Նախ՝ հպանցիկ նշելով, որ ծեսը Փարաջանովի արվեստում ներկա էր ոչ միայն կինոյում, որտեղ առանձնահատուկ տեղ էր հատկացված մարդկային գոյության այդ հնագույն հիմքերից մեկին, այլև հեղինակային պերֆորմանսի շրջանակներում էր այն ընդգրկված, և արվեստագետին հատկապես զբաղում էր թաղման ծեսը և նրա զանազան մոդիֆիկացիաները /էջ 139/, ատենախոսն իր դիտարկումների ծիրից դուրս է թողել այն հանգամանքը, որ Փարաջանովի աշխարհագրացությունն է առասպելական-ծիսական, և նրա հասուն շրջանի ֆիլմերում մնջախաղ-փերֆորմանսների բեմադրական հիմքում ընկած է ծիսական մտածողությունը, ծեսի ձևով և տրամաբանությամբ են դրանք ներկայացված: Այս ասպեկտի ներառումը տվյալ հետազոտության մեթոդաբանության մեջ կարող էր ևս մի կարևոր երանգ ավելացնել աշխատությանը:

Երկրորդ՝ հարկ ենք համարում նշել, որ կինոգիտության, ինչպես և ընդհանրապես արվեստաբանության մեջ դիտվող ստեղծագործությունն ամենից առաջ ներկայացնում է էսթետիկական հետաքրքրություն, ուստի և ատենախոսից պահանջվում էր ուսումնասիրվող առարկայի հստակ արվեստաբանական,

ձևաբանական քննություն, ինչը, կարծում ենք, ավելի առարկայական կդարձներ նրա հետազոտությունը:

Ամփոփելով մեր կարծիքը՝ նշենք, որ Վերոնիկա Իգորի Ժուրավյովայի՝ «Աշխարհի պատկերի էական ասպեկտները Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության մեջ» ատենախոսությունը համապատասխանում է ԺԷ.00.01 - «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող բոլոր պահանջներին, ուստի հեղինակն արժանի է իր հայցած արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում ենք հարգարժան մասնագիտական խորհրդի առջև:

Սեղմագիրը, ինչպես և նրա մեջ հիշատակվող հեղինակի հրատարակած աշխատությունները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Նիստի նախագահ՝

Երևանի Թատրոնի և կինոյի պետական

ինստիտուտի արվեստի պատմության և

տեսության ամբիոնի վարիչ,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Գ. Վ. Օրդոյան

11 հոկտեմբերի, 2022թ.

Գ. Վ. Օրդոյանի ստորագրությունը հաստատում են

ԵԹԿՊԻ-ի գիտ. քարտուղար՝

Գ. Հովհաննիսյան

